ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-7/20-1

ք. Երևան 17 .05. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի պժկ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Հրայր Մանուկյանի, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար/հավելված N 2/:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են՝ 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.12 Յուրաքանչյուր մատակարարման ամսվա 1-ին, 10-րդ և 20-րդ աշխատանքային օրերին ներկայանալ ՀՀ ՀՈՒ ԹՎ պարենային ծառայություն՝ մատակարարման ապրանքագրերը ստանալու համար:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5 825 328 (հինգ միլիոն ութ հարյուր քսանհինգ հազար երեք հարյուր քսանութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

այտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է

www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և 3.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ք. Երևան, Բագրևանդի 5	Ա/Ձ Հրայր Մանուկյան
ՀՀ ֆինանսների նախարարության	ԱՀ, ք. Շուշի, Ն.Դուման 2/47
աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 11500606269500
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 92103429
ՀՀ պաշտպանության նախարարության	
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-7/20-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Թարմ բազուկի որակի տեխնիկական պահանջները (ԳՈՍՏ 32285-2013)

Բարձր և առաջին տեսակի:

Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների:

Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների:

Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-10սմ.:

Առաջին տեսակի համար թույլատրվում է նշված չափերի շեղումներով ոչ ավել 1սմ-ից, ընդհանուր քանակի ոչ ավել 10%, իսկ բարձր տեսակի համար չի թույլատրվում:

Առաջին տեսակի համար թույլատրվում է շեղումներ նշված չափերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի, իսկ բարձր տեսակի համար չի թույլատրվում:

Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավելի, քան ընդհանուր քանակի 1%:

Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011 <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ծագման երկիրը՝ ՀՀ, ԱՀ:

Թարմ գազարի որակի տեխնիկական պահանջները (ԳՈՍՏ 32284-2013)

Բարձր և առաջին տեսակի:Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով)՝

- բարձր տեսակին՝ սեպտեմբերի 1-ից հետո 20-45մմ,
- առաջին տեսակին՝ մինչև սեպտեմբերի 1-ը 20-40մմ, սեպտեմբերի 1-ից հետո 20-60մմ,
- երկարությունը ոչ պակաս 10սմ-ից:

Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, չթառամած, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների, միագույն:

Թույլատրվում է շեղումներ նշված չափերից ոչ ավել 0.5 սմ՝ ընդհանուր քանակության 10%-ից ոչ ավելի:

Առաջին տեսակի համար թույլատրվում է շեղումներ՝ ծայրերի բացակայությամբ, կտրված (երկարությունը 70մմ-ից ոչ պակաս) ճաքերով, գլխիկների վնասվածքներով ընդհանուր քանակից ոչ ավել 5%, իսկ բարձր տեսակի համար չի թույլատրվում:

Առաջին տեսակի համար թույլատրվում է արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավելի, քան ընդհանուր քանակի 1%-ի չափով, իսկ բարձր տեսակի համար չի թույլատրվում:

Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ծագման երկիրը՝ ՀՀ, ԱՀ:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Չ/մ	Ընդհանուր քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Ապրանքների մատակարարումները 2018թ. ըստ ամիսների		
						Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր
1	Բազուկ, Երևանի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	1891	78	147498	1891		
2	Բազուկ, Երևանի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	1891	78	147498		1891	
3	Բազուկ, Երևանի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	1827	78	142506			1827
4	Բազուկ, Սյունիքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	2319	78	180882	2319		
5	Բազուկ, Սյունիքի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	2319	78	180882		2319	
6	Բազուկ, Շիրակի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	313	78	24414	313		
7	Բազուկ, Շիրակի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	313	78	24414		313	
8	Բազուկ, Շիրակի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	302	78	23556			302

9	Բազուկ, Լոռու տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	475	78	37050	475		
10	Բազուկ, Լոռու տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	475	78	37050		475	
11	Բազուկ, Լոռու տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	459	78	35802			459
12	Բազուկ, Արմավիրի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	1702	78	132756	1702		
13	Բազուկ, Արմավիրի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	1702	78	132756		1702	
14	Բազուկ, Արմավիրի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	1647	77.99	128464			1647
15	Բազուկ, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	2003	78	156234	2003		
16	Բազուկ, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	2003	78	156234		2003	
17	Բազուկ, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	1935	78	150930			1935
18	Բազուկ, Արարատի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	440	78	34320	440		
19	Բազուկ, Արարատի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	440	78	34320		440	
20	Բազուկ, Արարատի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	425	78	33150			425
21	Բազուկ, Արագածոտնի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	47	78	3666	47		
22	Բազուկ, Արագածոտնի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	47	78	3666		47	
23	Բազուկ, Արագածոտնի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	45	78	3510			45
24	Բազուկ, Վայոց Ձորի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	326	78	25428	326		
25	Բազուկ, Վայոց Ձորի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	326	78	25428		326	
26	Բազուկ, Տավուշի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	1583	78	123474	1583		
27	Բազուկ, Տավուշի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	1583	78	123474		1583	
28	Բազուկ, Տավուշի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	1530	78	119340			1530
29	Բազուկ, Կոտայքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	810	78	63180	810		
30	Բազուկ, Կոտայքի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	810	78	63180		810	
31	Բազուկ, Կոտայքի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	791	78	61698			791
32	Գազար, Սյունիքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	3815	188	717220	3815		
33	Գազար, Շիրակի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	520	188	97760	520		
34	Գազար, Լոռու տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	784	188	147392	784		
35	Գազար, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	3256	188	612128	3256		
36	Գազար, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	կգ	3256	188	612128		3256	
37	Գազար, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	կգ	3150	188	592200			3150
38	Գազար, Տավուշի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	կգ	2605	188	489740	2605		
	Ընդամենը	5 825 328 (հինգ միլիոն ութ հարյուր քսանհինգ հազար երեք հարյուր քսանութ) ՀՀ դրամ						

Ծանոթություն՝

* Մատակարարը պարտավոր է բանջարեղենի մատակարարումը զորամասերին իրականացնել համաձայն ՀՀ ՀՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագրերում նշված քանակների և ժամկետների:

** Բանջարեղենի առաքումը զորամասեր իրականացվելու է մատակարարների տրանսպորտային միջոցներով:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գանձապետական կառավարման
Հ/Հ 900011144[illegible]
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի տեսուչ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Հրայր Մանուկյան
ԱՀ, ք. Շուշի, Ն.Դուման 2/47
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500606269500
ՀՎՀՀ 92103429

ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-7/20-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ., այդ թվում					
			Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ
1	Բազուկ, Երևանի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	147498	147498	147498	147498	147498	147498
2	Բազուկ, Երևանի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		147498	147498	147498	147498	147498
3	Բազուկ, Երևանի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221100/1/10/3			142506	142506	142506	142506
4	Բազուկ, Սյունիքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	180882	180882	180882	180882	180882	180882
5	Բազուկ, Սյունիքի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		180882	180882	180882	180882	180882
6	Բազուկ, Շիրակի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	24414	24414	24414	24414	24414	24414
7	Բազուկ, Շիրակի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		24414	24414	24414	24414	24414
8	Բազուկ, Շիրակի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221100/1/10/3			23556	23556	23556	23556
9	Բազուկ, Լոռու տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	37050	37050	37050	37050	37050	37050
10	Բազուկ, Լոռու տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		37050	37050	37050	37050	37050
11	Բազուկ, Լոռու տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221100/1/10/3			35802	35802	35802	35802
12	Բազուկ, Արմավիրի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	132756	132756	132756	132756	132756	132756
13	Բազուկ, Արմավիրի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		132756	132756	132756	132756	132756
14	Բազուկ, Արմավիրի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221100/1/10/3			128464	128464	128464	128464
15	Բազուկ, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	156234	156234	156234	156234	156234	156234
16	Բազուկ, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		156234	156234	156234	156234	156234
17	Բազուկ, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221100/1/10/3			150930	150930	150930	150930
18	Բազուկ, Արարատի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	34320	34320	34320	34320	34320	34320
19	Բազուկ, Արարատի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		34320	34320	34320	34320	34320
20	Բազուկ, Արարատի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221100/1/10/3			33150	33150	33150	33150
21	Բազուկ, Արագածոտնի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	3666	3666	3666	3666	3666	3666
22	Բազուկ, Արագածոտնի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		3666	3666	3666	3666	3666
23	Բազուկ, Արագածոտնի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221100/1/10/3			3510	3510	3510	3510
24	Բազուկ, Վայոց Ձորի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	25428	25428	25428	25428	25428	25428

25	Բազուկ, Վայոց Ձորի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		25428	25428	25428	25428	25428
26	Բազուկ, Տավուշի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	123474	123474	123474	123474	123474	123474
27	Բազուկ, Տավուշի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		123474	123474	123474	123474	123474
28	Բազուկ, Տավուշի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221100/1/10/3			119340	119340	119340	119340
29	Բազուկ, Կոտայքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221100/1/10/3	63180	63180	63180	63180	63180	63180
30	Բազուկ, Կոտայքի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221100/1/10/3		63180	63180	63180	63180	63180
31	Բազուկ, Կոտայքի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221100/1/10/3			61698	61698	61698	61698
32	Գազար, Սյունիքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221110/1/10/3	717220	717220	717220	717220	717220	717220
33	Գազար, Շիրակի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221110/1/10/3	97760	97760	97760	97760	97760	97760
34	Գազար, Լոռու տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221110/1/10/3	147392	147392	147392	147392	147392	147392
35	Գազար, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221110/1/10/3	612128	612128	612128	612128	612128	612128
36	Գազար, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, օգոստոս	03221110/1/10/3		612128	612128	612128	612128	612128
37	Գազար, Գեղարքունիքի տարածաշրջանի զորամասեր, սեպտեմբեր	03221110/1/10/3			592200	592200	592200	592200
38	Գազար, Տավուշի տարածաշրջանի զորամասեր, հուլիս	03221110/1/10/3	489740	489740	489740	489740	489740	489740

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի տնտեսվարող

[illegible]ՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ Հրայր Մանուկյան
ԱՀ, ք. Շուշի, Ն.Դումա 2/47
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 11500606269500
ՀՎՀՀ 92103429

[illegible]ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կ.
N 01-Ա 008254
92103429

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-7/20-1 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-7/20-1 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն